ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝ +37491700974, **Էլ. հասցե՝** foi@foi.am, **ww.foi.am**

14.07.2023
351-23

ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության
երրորդ դասի խորհրդական Ա. Հովհաննիսյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2023 թ.-ի հունիսի 19-ին տեղեկություն ստաալու հարցում էր ուղարկել Երևանի դատախազություն Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում իրականացվող թիվ 13132121 քրեական վարույթի հանգամանքների վերաբերյալ: Հարցումը վերահասցեագրվել էր Քննչական կոմիտե, որը պատասխան գրությամբ (առդիր՝ հավելված 1) տեղեկացրել է, որ չնայած քրեական վարույթի ընթացքում իրականացվել է լայնածավալ և բազմակողմանի քննություն, սակայն դեռևս դրական արդյունք չի ստացվել: Գրությունից պարզ է դառնում, որ գործով ներգրավված մեղադրյալ չկա, սակայն պատասխան գրությունից, հնարավոր չէ ստանալ ԻԱԿ-ի գրության հարցերի մեկի պատասխանը:

Ուստի համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները

1. Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան